

Տեղեկանք

2019 թ. գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով

ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ ձեռքբերված գիտական սարքի/սարքավորման վերաբերյալ

Սարքի/սարքավորման անվանումը	UV-VIS սպեկտրոմետր և դիֆերենցիալ սկանավորող միկրոկոլորիմետր BioTek Epoch 2
Գիտական կազմակերպություն	ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ
Համաֆինանսավորող կազմակերպություն	ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ
Գիտության կոմիտեից ստացված ֆինանսական աջակցության չափը (հազար դրամ)	8 000
Համաֆինանսավորման չափը (հազար դրամ)	1.810
Շահագրգիռ կազմակերպություններ	ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետ ՀՌՀ Կենսաբժշկության և ֆարմացիայի ինստիտուտ
Սարքի/սարքավորման կիրառման ոլորտները	<p>Լաբորատորիայում սարքը կիրառվում է բջիջների թունաբանության ուսումնասիրման համար, այն չափում է պլանշետի խցաններում օպտիկական խտությունը, որը պայմանավորված է խցաններում առկա ներկանյութերով: Տվյալ ներկանյութերը ներկում են ողջ և մետաբոլիկ ակտիվություն ունեցող բջիջները:</p> <p>Սարքի օգնությամբ հնարավոր է իրականացնել նյութերի լայնածավալ սկրինինգ: Այսպիսի սկրինինգները մեծ արդիականություն են վայելում ժամանակակից կենսաբժշկության բնագավառում նոր դեղորայքային նյութերի (հակաքաղցկեղային, հակավիրուսային, հակաբակտերիալ) մշակման համար:</p> <p>Այս սարքը թույլ է տալիս նաև իրականացնել իմունոֆերմենտային անալիզ (ELISA)՝ հակամարմինների օգնությամբ հակաձինների հայտնաբերում նմուշում:</p>

	<p>Սարքն ունի ինչպես կյուվետով այնպես էլ պլանշետով կոլոնիմետրիկ չափումներ իրականացնելու գործառույթ:</p>
<p>Սարքով/սարքավորումով կատարված/կատարվող աշխատանքները (հետազոտություններ, օգտվող գիտաշխատողների և կազմակերպությունների թիվ, հրապարակումներ և այլ տեղեկատվություն)</p>	<p>Սարքն օգտագործվում է ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի , հակավիրուսային պաշտպանության մեխանիզմների հետազոտման խմբի կողմից: Խմբում սարքն օգտագործվում է թունաբանության, հակավիրուսային ակտիվության սկրինինգի, իմունոֆերմենտային անալիզի և կենսաքիմիական հետազոտությունների համար: Սարքի օգնությամբ իրականացվել է ֆլավոնոիդների թունաբանության և հակավիրուսային ակտիվության որոշում, խոզերի աֆրիկյան ժանտախտի VP72 կապսիդային սպիտակուցի քանակական որոշում հետազոտվող նյութերի ազդեցությամբ: Սարքի օգնությամբ պարզաբանվել է սինթետիկ միացության ակտիվության մեխանիզմը: Վերոնշյալ միացությունը հանդիսանում է միկրոփոդակների տուբուլին սպիտակուցի պոլիմերացման կայունացնող: Տվյալ աշխատանքը ուղարկվել է տպագրության Emerging Microbes and Infection (IF = 5.7): Սարքն ունի առանցքային նշանակություն լաբորատորիայում կատարվող բոլոր փորձերի համար: Սպեկտրոֆոտոմետրից օգտվում է 5 գիտաշխատող: Խմբում հայտնաբերվել է մի շարք բուսական ծագման, ինչպես նաև սինթետիկ միացությունների հակավիրուսային ակտիվությունը խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի նկատմամբ: Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսն առաջացնում է ընտանի և վայրի խոզերի բարձր մահացություն: Վիրուսը պատճառում է հսկայածավալ տնտեսական հետևանքներ: Ներկայումս գոյություն չունի պատվաստանյութ կամ դեղորայքային միջոց ԽԱԺՎի դեմ:</p>

Գիտական կազմակերպության ղեկավար՝

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ ձեռքբերված սարքավորումների լուսանկարներ

UV-VIS սպեկտրոմետր և դիֆերենցիալ սկանավորող միկրոկլորիմետր BioTek Epoch 2

